

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՈՒՆԴԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱԿՏՈՒՄԻ ԱՅԻՆ ՏՐԱՆՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈՒՆԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԾՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ**

Արարատի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիների համար՝

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒՄ				
	Անվանումը և համարը	սկզբնակետը /ավտոկայան/	վերջնակետը /ավտոկայան/	տեսակը /ավտոբուս /միկրոավտոբուս/	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը /ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը/
1	02-010 Արտաշատ- Ջրաշեն	Արտաշատ	Ջրաշեն	ավտոբուս	2
2	02-013 Արտաշատ-Խոր Վիրապ- Լուսառատ-ՈԿՖ	Արտաշատ	ՈԿՖ	միկրոավտոբուս	2
3	02-024 Մասիս-Նիզամի	Մասիս	Նիզամի	միկրոավտոբուս	3
4	02-025 Մասիս-Հովտաշատ	Մասիս	Հովտաշատ	ավտոբուս	2
5	02-026 Մասիս-Նորամարգ	Մասիս	Նորամարգ	ավտոբուս	2
6	02-030 Մասիս-Նոր Կյուրիս	Մասիս	Նոր Կյուրիս	միկրոավտոբուս	2

**Ց Ա Ն Կ**

**ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ**

- Հայտ.
- Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
- Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր /գրանցման վկայագրեր/.
- Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
- Ավտոբուսի վարձակալման դեպքում վարձակալության պայմանագիր.
- Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու /կահավորելու/ դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
- Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
- Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցության կարգով պահանջվելու դեպքերում.
- Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակալանի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցության կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ զիջերակացով սպասարկվող երթուղիների համար.
- Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի /եթ սահմանված է/ փոխադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:  
Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստանձնված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ ստանձնված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը:  
Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 14 ապրիլի 2017թ., ժ 11-ին, ք.Արտաշատ, Օգոստոսի23 N156, „Արտաշատի ԲՈՒՍՏ, ՄՊԸ Հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը՝ Արարատի մարզպետարան, սենյակ N 507, ամեն օր՝ ժամը 10-ից -17-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից), վերջին ժամկետը՝ 07 ապրիլի 2017թ., ժամը՝ 17 00-ն:  
Հեռախոսահամար լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ 0235/2-15-02  
Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի N762 որոշման պահանջների համաձայն:

Մրցույթային հանձնաժողովի նախագահ

Գ. Մուրադյան

